ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1033-Ա « 23 » փետրվարի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի
Ն 5105-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի «Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» Ն 46-Ն որոշման հավելվածի 8.1 կետով և 31-րդ կետի 1-ին ենթակետով.

1. Երևանի քաղաքապետի 2024 թվականի դեկտեմբերի 30-ի «Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին» Ն 5105-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Ընդունել ի գիտություն, որ խորհուրդը գործում է երկու տարի ժամկետով:
3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանի վրա:
4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
23.02.2026թ.
N 1033-Ա որոշման

Հավելված
Երևանի քաղաքապետի
30 դեկտեմբերի 2024թ.
N 5105-Ա որոշման

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Խորհրդի նախագահ

Տիգրան Ավինյան	Երևանի քաղաքապետ

Խորհրդի նախագահի տեղակալ

Արմեն Փամբուխչյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ

Խորհրդի քարտուղար

Լուսինե Պետրոսյան	Երևանի քաղաքապետի օգնական

Խորհրդի անդամներ

Արման Լազրյան	Երևանի քաղաքապետի խորհրդական
Լենա Մելքոնյան	Երևանի քաղաքապետի օգնական
Արման Անդրիասյան	Երևանի քաղաքապետի օգնական
Դավիթ Ղլիջյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալի օգնական
Արսեն Մակվեցյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի վարչության պետ
Հարություն Առաքելյան	Երևանի քաղաքապետարանի «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրենի պ/կ
Էդվարդ Մխիթարյան	Պրոդյուսեր

Նոննա Հովհաննիսյան	Դիզայներ
Կարեն Բադալյան	Մոսկվայի ճարտարապետական ինստիտուտի և «ԿԲ Ստրելկա» կազմակերպության ճարտարապետ
Էմմա Հակոբյան	Մեդիա մենեջեր, պրոդյուսեր և լրագրող
Ջեմմա Սահակյան	Կինոյի, հեռուստատեսության և թատրոնի պրոդյուսեր
Կարլեն Դիլբարյան	Արվեստագետ, հետազոտող
Արթուր Պետրոսյան	Ստեղծագործական տնօրեն, վիդեոխմբագիր
Արթուր Տեր-Եսայան	Գրաֆիկական դիզայներ
Դավիթ Մուրադյան	Change & Release Management թիմի ղեկավար, Դիջիթեյն, բիզնեսի զարգացման տնօրեն, AccountTech Հայաստան
Գևորգ Ղազեյան	Ֆիթնես մարզիչ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**